Ուղեղիս մէջ հայերէն լեզուն ծալքեր է բաց անում։

«Բայրօնի սենեակը» յիշատակների գեղեցման է։ Ամէն ինչ փայլում է։ Գրականների ետեւ, մէկը միւսի վրայ դիզուած, յախճապակիներ, միզալիոններ, փայտէ շինուած առարկաներ։ Լեւոն Թագաւորի սուրը։ Բայրօնի գրիչը։ կաթողիկոսների կոնդակները։ Միւս սենեակում՝ եգիպտական մումեան եւ հազարաւոր հատորներ, գեղեցիկ կազմուած եւ կանոնաւոր դասաւորուած։

Մումիայի արկղի գունաւոր նկարների նման գրաբառը սրտիս մէջ թառամած լոյսեր է կուտակում։ ածականները ոտքերիս տակ երփներանգ կարպետներ են փռում եւ բայերը սարկաւագների պէս ծնծղայ են շարժում եւ մօրուքը շարժելով երգում են։

Ագաթանգեղոս։ Զենոբ Գլակ։ Փաւստոս Բիւզանդացի։

Հնչուն եւ գեղեցիկ անուններ։ Արծաթէ շեւեր էր որ դարերի գիշերում միայնակ հեծկլտում են։ Արշակ Թագաւորը մեռնում է։ Հայաստանը բաժան բաժան է լինում եւ գրաբառը արիւնի լճակներով ծածկուած հողի վրայ տաչուած մարմարներ է դետեղում, պատեր է բարձրացնում, գմբէթ է շինում ու բարձրը մի զանգակատունից երկարօրէն հառաչող զողանջներ է զրկում։

Էջը դարձնող մատերս ահաւոր ցաւերի են քսում։

Աչունը գլուխը կոցնում է պատուհանին եւ կարմրած աչքերով ներս է նայում։

Իսկ փայտէ քանդակներով զարդարուած հարեւան դահլիճում պառկել է մումիան։ Իսկ գրակալի մէջ, փոշիով ծածկուած հնչին եւ անպէտք առարկաների հետ, կախուել է Հայոց Թագաւորի սուրը։

Արքան մեր...

Մեզանից ամէն մէկը մի քիչ գաւառական թանգարան է։

Մարդիկ կահաւորուած են հնչին եւ անպէտք զգացումներով եւ գաղափարներով։ Ամենօրեայ կեանքը, միջավայրը, դաստիարակութիւնը մեզ լեցնում են փոքրիկ ապրումներով, միջակ ու գորշ պահանջներով, տաղտկալի կրկնութիւններով, ընդունուած, նեխուած օրէնքներով։

Ի՞նչ կը լինէր մեզ հետ, եթէ չունենայինք ներշնչման բախտաւոր վայրկեաններ եւ ըմբոստանալ կարողանալու առաքինութիւնը։ Ի՞նչ կը լինէր, եթէ մի օր, աստուածային ներքնատեսութեամբ, յանկարծ չնկատէինք, որ այնտեղ, մի ինչ որ անկիւնում, ուժգնօրէն բաբախող մեր սրտի մօտ, կախուած է արքայական մի սուր։

Մեծ, փայլուն, կռացած մի սուր, որի վրայ քանդակուած են մեր ճակատագիրը պատմող գրերը։

Այդ վայրկեաններին հոգին իր թագը գըլխին է դնում։ Հագնում է կարմիր պատմուճան եւ նստում է բարձր մի գահի վրայ։

Հայը յանախ կորցնում է իր սրտի արքայական սուրը։

Պատմութիւնը իր գլուխը վայր է նետում մորթուած եղան նման։ Անապատը քարանում է։ Սարդարապատի վրայ օձեր են պարում, ու դարը, հիւանդ ու սպառած վայրկեաններին, վիժում է գեղեցկութիւնից ու վեհութիւնից դուրկ մարդուկներ։

Աղուէսի աչքերով, գարշելի դէմքով, մանր, գորշ, ագահ եւ խորամանկ մարդիկ։ Ինքնահաւան, հնչին եւ այլանդակ հայեր։ Քիթը գետնին տուած սողուն վաճառականներ։ գործիչներ, վանականներ՝ կեղծաւոր ժպիտով, կուզ հոգիով եւ խուլ սրտով։

Արարատը ծածկում է իր դէմքը։ Սիսանը կորչում է մառախուղի մէջ։ Ալիշանը պինդ պլլուում է իր գերեզմանի հողին եւ ուզում է դիակ մնալ։

Էջը դարձնող մատերս սարսուռ են սեղմում։

Քամին տրորում է Լագունան։ Աչունը իր գլուխը թափահարում է, թեւերը վեր բարձրացնում, մարմինը դալարում։

Ու ահա, Հայոց աշխարհում, արքան իր սուրը դուրս է հանել եւ հարուածում է։

Գրաբառը ներդաշնակ նախադասութիւնների առջեւ կանգնած ոսկէ մի բորազան փը-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան